ՄԱՐԻԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՕՏԱՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլաբնույթ փոփոխությունները երկրում, թույլ են տալիս անդրադառնալ նախկինում արգելված թեմաներին, պահանջում են վերանայել և վերաիմաստավորել շատ հոգեբանական հասկացություններ, անձի ձևավորման գործընթացը պայմանավորող գործոններ, որը հնարավորություն է տալիս ընդարձակել հոգեբանության ուսումնասիրության շրջանակը: Այդ փոփոխությունները ինքնին ենթադրում են նոր մեկնաբանություններ, նոր տեսանկյուններ՝ առկա իրականությանը համապատասխան: Այդպիսի հասկացությունների թվին է դասվում «օտարացում» հասկացությունը:

Ի սկզբանե «օտարացում» հասկացությունը եղել է փիլիսոփայական կատեգորիա և դրա տարածումը փիլիսոփայությունից դեպի հոգեբանության ոլորտը պայմանավորված է մարդու բարդ, հակասական հարաբերությունների բացատրության անհրաժեշտությամբ աշխարհի և այլ մարդկանց հետ: Սակայն դրա հետ մեկտեղ շատ կարևոր է, օտարացման հասկացությունը բնութագրելու ժամանակ, պահպանել նրա փիլիսոփայական իմաստը:

«Օտարացման» հասկացությունը փիլիսոփայական իմաստով բնութագրվում է որպես.

- Գործընթաց, երբ մարդկային գործունեության արդյունքները՝ աշխատանքը, հասարակական հարաբերությունները և այլն, ինչպես նաև մարդու հատկություններն ու ընդունակությունները վերածվում են իրենից անկախ և իր վրա իշխող մի բանի,
- Տարբեր երևույթների կամ հարաբերությունների աղավաղում ու խեղաթյուրում մարդկանց գիտակցության մեջ [1]:

Քանի որ, ինչպես վերը նշվեց, «օտարացում» հասկացությունը եղել է փիլիսոփայական կատեգորիա, ապա կատարենք պատմական էքսկուրս՝ որպեսզի ավելի լավ հասկանանք այդ հասկացության էությունը:

Օտարացման հասկացության ակունքներ կարելի է գտնել Ֆր. (Ռուսսո) գեր. (Գյոթե, Շելլեր) Լուսավորության ներկայացուցիչների մոտ:

[1] Փիլիսոփայական բառարան, Մ.Մ. Ռոզենտալի խմբագրությամբ, Երևան, 1975, էջ 449.

Օբյեկտիվորեն այդ գաղափարն արտահայտում էր բողոք մասնավոր-սեփականատիրական հարաբերությունների հակամարդասիրական բնույթի դեմ:

Օտարացման խնդիրն այնուհետև մշակվել է գերմանական դասական փիլիսոփայության մեջ: Այս ուղղության ներկայացուցիչներից Գ. Հեգելը[2] զարգացրել է օտարացման իդեալիստական մեկնաբանությունը: Նրա մոտ ամբողջ օբյեկտիվ աշխարհը հանդես է գալիս որպես «օտարված ոգի»: «Ի սկզբանե,- ասում է նա, - չի եղել ոչինչ բացարձակ ոգուց բացի, այն իր ներքին հակասությունների պատճառով վերածվել է բնության: Բայց ոչ թե ոգին է ծնել ու ստեղծել բնությունը, այլ բնությունն ոգու այլակեցությունն է օտարման մեջ»[3]: Ըստ նրա, զարգացման խնդիրն այն է, որ ճանաչողության պրոցեսում վերառվի այդ օտարումը: Դրա հետ մեկտեղ օտարացման հեգելյան ըմբռնման մեջ կան որոշ ռացիոնալ կռահումներ անտագոնիստական /հակամարտական/ հասարակության պայմաններում աշխատանքի որոշ առանձնահատկությունների վերաբերյալ: Գ. Հեգելը[4] առաջինն է նշել, որ օտարացման հիմքում ընկած է անձի օտարացված գործունեությունը: Ստրուկը, ըստ նրա, ստրուկ է այն բանի համար, որ նրա գործունեության ամբողջ ծավալը օտարվել է տիրոջը:

Գերմանական դասական փիլիսոփայության մյուս ներկայացուցիչը՝ Լ. Ֆոյերբախը[5], կրոնն էր դիտում որպես մարդկային էության օտարում, իսկ իդեալիզմը՝ որպես բանականության օտարում: Սակայն, օտարացումը հանգեցնելով միայն գիտակցության երևույթներին, նա չգտավ օտարացման վերացման իրական ուղիները, քանի որ այդպիսի ուղի նա համարում էր լոկ տեսական քննադատությունը:

Օտարացման վերլուծությանը մեծ ուշադրություն է հատկացրել Կ. Մարքսը[6]: Նա գտնում էր, որ օտարացումը առաջանում է աշխատանքի անհավասար բաժանման հետևանքով և կապված է մասնավոր սեփականության հետ: Ըստ նրա, յուրաքանչյուր մարդ օտարված է մյուսից և մարդկային էությունից այնքան շատ, որքան բարձր է նրա աշխատանքի շահագործումը տվյալ հասարակության մեջ: Նա գտնում էր նաև, որ միայն հասարակության կոմունիստական վերակառուցման միջոցով օտարացումը կվերանա, այն ժամանակ, երբ հասարակության հարստության չափանիշ կդառնա անհատի համակողմանի զարգացումը:

Ժամանակակից փիլիսոփայությունը, որն ընդգրկում է 20-րդ դարի փիլիսոփայական դպրոցները, սերտորեն կապված է նախորդ շրջանի

---

[2] Գ. Հեգել, Փիլիսոփայության ներածություն, Երևան, 1964.
[3] Նույն տեղում
[4] Г. Гегель, Соч., т. 7, с. 207.
[5] Լ. Ֆոյերբախ, Քրիստոնեության էությունը, Երևան, 1964.
[6] Ա. Սպիրկին, Մարքսիստական փիլիսոփայության դասընթաց, Երևան, 1960.

փիլիսոփայության ժառանգության հետ: Բայց յուրաքանչյուր փիլիսոփայական ուսմունք՝ լինելով իր դարաշրջանի, ժամանակի ոգին, հանդես է գալիս որպես նրանում տեղի ունեցող փոփոխությունների, խնդիրների յուրահատուկ արձագանք, իսկ 20-րդ դարը այս իմաստով հարուստ է սոցիալական և մշակույթային փոփոխություններով՝ համաշխարհային պատերազմներ, հեղափոխություններ, գիտատեխնիկական հեղափոխություն: Օտարացման թեման այս շրջանի փիլիսոփաների կողմից լուսաբանվել է՝ կապվելով գիտատեխնիկական առաջընթացի հետ՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, թե ինչ հասարակական կարգում այն տեղ ունի: Փաստորեն, վերոհիշյալ ժամանակաշրջանում, օտարացման խնդրի ուսումնասիրության մեջ առաջին տեղ մղվեց մարդկային և բնական ռեսուրսների սպառման, «մեքենայացման» հարցը:

Օտարացմանը մեծ ուշադրություն են դարձրել նաև էկզիստենցիալիստները՝ Մ. Հայդեգերը, Ա. Կամյուն, Կ. Յասպերսը, Ժ. Սարտրը[7]:

Մ. Հայդեգերի[8] մոտ «օտարացում» կատեգորիան հանդես է գալիս «նիհիլիզմ» հասկացության տեսքով, որը նշանակում է գիտակցության համընդհանուր դատարկություն և կեցության բնութագրական արժեքների կորուստ: Նիհիլիզմի բարձրագույն աստիճանը մարդու ամբողջական և ինքնական ինքնաօտարումն է, հոգու դատարկությունը: Այդպիսի դատարկությունը Ա. Կամյուն[9] մեկնաբանում է որպես մարդու ինքնական հաղթանակ, որն ուղղել է իր պատրանքները և որոշել համարձակ նայել դժբախտ իրականության աչքերին, հրաժարվել քարացած բարքերից՝ իր թվացյալ հաղթահարած արմատական հարցերով՝ կյանքի և մահվան վերաբերյալ: Բայց դա հաղթանակ չէ, այլ միայն համակերպում հուսահատության վիճակին, որը սկզբում չէր գիտակցվում, այլ միայն ապրվում էր որպես գիտակցության անհասկանալի բաժանում: Հիմա դա գիտակցվում է իր էկզիստենցիալ իմաստով, բայց այդ գիտակցումը տանում է ավելի տանջալի անելանելիության: Հենց այդ անելանելիությունը էկզիստենցիալիստները փորձում են իմաստավորել որպես իրավիճակից ելք. հուսահատության պասիվ իրականությունը նրանք առաջարկեցին վերափոխել ակտիվ աշխատանքի՝ էկզիստենցիալ հուսահատության խորության ուղղությամբ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք «օտարացում» հասկացության փիլիսոփայական մեկնաբանության մեջ, նրա կենտրոնում մարդն է՝ իր բազմապիսի և բարդ հարաբերություններով այլ մարդկանց և աշխարհի հետ: Ուստի բնական է այդ հասկացության տարածումը փիլիսոփայության ոլորտից

---

[7] Фролов И. Т., Введение в философию, М., 2003, с. 218.
[8] Нарский И.С., Отчуждение и труд, М., 1986, с. 135-136.
[9] Նույն տեղում, էջ 139-142.

դեպի հոգեբանության ոլորտը: Սակայն, դրա հետ մեկտեղ, ինչպես վերը նշվեց, շատ կարևոր է «օտարացում» հասկացությունը բնութագրելու ժամանակ պահպանել նրա փիլիսոփայական իմաստը և բացել նրա նշանակությունը հոգեբանության մեջ՝ դասելով այդ հասկացությունը այս կամ այն կոնկրետ երևույթի մեջ՝ անձի կյանքում: Մենք մեր առջև խնդիր ենք դրել ուսումնասիրել օժտվածության երևույթը, ավելի կոնկրետ՝ հոգեբանական օտարացման առաջացման պատճառները օժտված երեխաների փոխհարաբերություններում, որին կանդրադառնանք մեր հաջորդ աշխատանքներում: Իսկ այժմ դիտենք, թե ինչպես է բնութագրվում «օտարացում» հասկացությունը հոգեբանության մեջ և ինչպիսի զարգացում է ունեցել:

«Օտարացում» հասկացությունը հոգեբանական իմաստով բնութագրվում է որպես սուբյեկտի այնպիսի կենսական հարաբերություններ աշխարհի հետ, որոնց դեպքում նրա գործունեության արդյունքը, հենց ինքը, ինչպես նաև այլ անհատներ ու սոցիալական խմբեր՝ հանդիսանալով որոշակի նորմերի, դիրքորոշումների և արժեքների կրողը, գիտակցվում են որպես իրեն հակառակ (անհամապատասխանությունից մինչև տհաճություն և թշնամություն): Դա արտահայտվում է սուբյեկտի համապատասխան անհանգստությամբ, մեկուսացվածության զգացմամբ, մենակությամբ, մերժվածությամբ, ես-ի կորստով և այլն[10]:

«Հոգեբանական օտարացում» հասկացությունն առաջին անգամ օգտագործվել է Զ. Ֆրեյդի[11] կողմից: Նա կապում էր օտարացման երևույթը անձի ախտաբանական զարգացման հետ, որի համար սոցիալական մշակույթը հանդիսանում էր օտար, թշնամական իր բնական էությանը: Ինքնօտարացումը, ըստ նրա, տանում է կամ սեփական «ես»-ի նևրոտիկ կորստի՝ դեպերսոնալիզացիայի, կամ շրջապատող աշխարհի իրականության զգացման կորստի՝ դեռեալիզացիայի:

է. Ֆրոմը[12], Զ. Ֆրեյդից հետո, ընդգրկելով օտարացում հասկացությունը գիտական շրջանառության մեջ, էապես ընդարձակեց այդ հասկացության կիրառման շրջանակը: Ըստ նրա, օտարացումը հանդես է գալիս հետևյալ ձևով. օտարացում մերձավորից, աշխատանքից, պետությունից, օտարացում պահանջմունքից և վերջապես օտարացում ինքդ քեզնից: է. Ֆրոմի համար օտարացումը սեփական անձից դա առաջին հերթին մարդու վերաբերմունքն է «ես»-ի նկատմամբ որպես վաճառվող ապրանքի, որը պետք է վաճառել «անձնային շուկայում» հնարավորինս թանկ: Այդպիսի մարդու համար նա

---

[10] Психология. Словарь, А. В. Петровского и М. Г. Ярошевского, М., 1990, с. 260.
[11] Зигмунд Фрейд, Я и Оно, М., 2004.
[12] Fromm E., The sane society, N. Y., 1955.

գրում է. «Նրա՝ իր անձի զգայությունը սկիզբ է առնում ոչ թե իր՝ որպես սիրող և մտածող անձի ակտիվությունից, այլ իր ինքնտնտեսական դիրքից: Եթե մարդուն հարցնես. «Ո՞վ ես դու», նա մեքենայի նման կպատասխանի. ես բժիշկ եմ, գործավար և այլն: Մարդը աբստրակցիա է, որը օտարացել է իր իսկական բնույթից»[13]:

է. Ֆրոմը [14] գտնում է նաև, որ ժողովրդավարությունը բերում է նրան, որ մարդիկ ավելի են օտարանում մեկը մյուսից: Մարդը աշխարհում օտարացած է ամեն ինչից, նա «ազատ» է ամեն ինչից: Նա չունի ոչ մի կապ աշխարհի հետ, ընկերների հետ: Առաջանում է օտարումը, որը է. Ֆրոմը անվանում է «նեգատիվ ազատություն»: Նա շատ հետաքրքիր է անվանել իր գիրքը՝ «Փախուստ ազատությունից»: Նա ասում էր, որ մարդը ուզում է լինել «ազատ», նա ուզում է ունենալ ինչ-որ հարաբերություններ, մտնել ինչ-որ հաղորդակցման մեջ մարդկանց հետ: Իսկ ինչպե՞ս ազատվել այդ օտարացումից: Շարունակելով՝ հեղինակը ասում է, որ օտարացումը բնորոշ է մեր սերնդի բոլոր մարդկանց և նրանից կարելի է ազատվել հումանիստական հարաբերությունների ճանապարհով:

Անձի օտարացման բնույթի և դրսևորումների այս հայացքները չէին կարող չազդել այն գիտնականների պատկերացումների վրա, որոնք զբաղվում էին օնտոգենեզում անձի զարգացման խնդիրներով: Այսպես օրինակ Կ. Հորնիի[15] մոտ առանցքային հասկացությունը հանդիսանում է երեխայի հիմնային տագնապը, որը արտահայտվում է երեխայի մենանության, անօգնականության զգացմամբ իրեն թշնամական աշխարհում:

«Հոգեբանական օտարացում» հասկացությունը այնուհետև կիրառվել է այն հոգեբանների կողմից, որոնք գործունեություն էին ծավալում հոգեբանության տարբեր բնագավառներում՝ սոցիալ հոգեբանության մեջ, տարիքային հոգեբանության մեջ, քրեահոգեբանության մեջ և այլն:

Սոցիալ հոգեբանները (Մ. Սիմեն, Ռ. Մերտոն և այլն) «հոգեբանական օտարացում» հասկացությունը կիրառել են՝ բնութագրելու համար միջանձնային հարաբերությունները, երբ մարդը հակադրվում է այլ մարդկանց, սոցիալական խմբերի՝ միաժամանակ գիտակցելով իր մեկուսացվածությունը:

Տարիքային և մանկավարժական հոգեբանությամբ զբաղվող հոգեբանները (Լ. Վիգոտսկի, Ա. Խարչև, Ա. Զապորոժեց, Բ. Անանև, Լ. Բոժովիչ, Ա. Վալլոն, Մ. Բուլբի և այլն), անդրադարձել են «հոգեբանական օտարացման»

---

[13] Նույն տեղում, էջ 141-142.
[14] Նույն տեղում, էջ 75-79.
[15] Грэйс Крайг, Психология развития, Санкт-Петербург. 2002. с. 34.

առաջացման պատճառներին և գտնում էին, որ այդ պատճառները հարկավոր է փնտրել վաղ տարիքում, երբ երեխային շրջապատող մարդիկ՝ հատկապես մայրը, ջերմ հարաբերություններ չեն ցուցաբերում:

Քրեահոգեբանների կողմից ևս օտարացման խնդիրը ուսումնասիրվել է, քանի որ (Վ. Ֆոկս, Յու. Անտոնյան, Վ. Կուդրյավցևը, Ա. Կրավչենկոն, Ա. Սախարով, Ս. Արզումանյան և այլ) սոցիալական միջավայրից անձի օտարացումը հաճախ հանգեցրել է նեգատիվ վերաբերմունքի սոցիալական միջավայրի և նրա արժեքների նկատմամբ, որն էլ ծնել է ագրեսիա՝ որպես պաշտպանություն երևակայական հարձակումից կամ վտանգից, որն ընկած է անձի նկատմամբ շատ ծանր հանցագործությունների մոտիվացիայի հիմքում:

Օտարացման խնդրի բազմակողմանի ուսումնասիրությունը, բնականաբար, առաջադրել է նաև գործնական խնդիրներ, որը մեկ անգամ ևս ապացուցում է այդ հիմնախնդրի կարևորությունը և արդիականությունը:

Այսպիսով, ընդհանրացնելով անձի «հոգեբանական օտարացում» հասկացության փիլիսոփայական և հոգեբանական մեկնաբանությունները, կարող ենք ասել, որ օտարացման առանցքում մարդն է իր բազմաբնույթ և բազմապիսի հարաբերություններով աշխարհի, այլ մարդկանց և իր «ես»-ի հետ: